600.0041.30.12.99

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 դեկտեմբերի 1999 թվականի №41
քաղ. Երևան

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի և «Հայգազարդ» ՊՓԲԸ-ի ներկրման գործունեության լիցենզիաների գործողությունների ժամկետները երկարաձգելու մասին

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «բ» ենթակետը և 41-րդ հոդվածը, ինչպես նաև «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի և «Հայգազարդ» ՊՓԲԸ-ի նախկինում կնքած և ներկայումս գործող բնական գազի ներկրման պայմանագրերը, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը **որոշում է**.

1. Բավարարել «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի և «Հայգազարդ» ՊՓԲԸ-ի ներկայացրած հայտերը և բնական գազի ներկրման լիցենզիաների գործողությունների ժամկետները երկարաձգել մինչև 2001 թվականի հունվարի 1-ը ներառյալ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի
նախագահի տեղակալ՝ **Ն. Գրիգորյան**